AU FRANCOPHONIE

Հայաստանի Հանրապետություն
Կրթության եւ գիտության
նախարարություն

ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀՀ կրթության և գիտության նախարարության

և

Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալության

միջև

համատեղ գիտահետազոտական և համալսարանական ծրագրերի իրականացման մասին

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը՝ նստավայրը՝ Երևան, Հայաստանի Հանրապետություն, այսուհետ՝ ԿԳՆ, ի դեմս նախարար ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆԻ,

և

Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալությունը՝ նստավայրը՝ Մոնրեալ, Քվեբեկ, Կանադա, այսուհետ՝ ՖՀԳ, ի դեմս ռեկտոր Ժան-Փոլ դե ԳՈԴԵՄԱՐԻ, մյուս կողմից,

այսուհետ՝ միասին՝ Կողմեր,

հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության և Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալության միջև 2010թ. հոկտեմբերի 5-ին կնքված «Հայաստանում Ֆրանկոֆոնիայի թվայնացված կենտրոն ստեղծելու մասին» պայմանագիրը,

ինչպես նաև համարելով Ֆրանկոֆոնիայի եվրոպական ցանցի ստեղծումը՝ որպես Հայաստանի՝ գիտահետազոտական և բարձրագույն կրթական եվրոպական տարածք ինտեգրման գործընթացի ամրապնդման խթան,

համաձայնեցին հետևյալի շուրջ.

Հոդված 1

Սույն Փոխըմբռնման հուշագրի (այսուհետ՝ Հուշագիր) նպատակն է՝ զարգացնել Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի գիտահետազոտական լաբորատորիաների հետազոտական և տեխնոլոգիական գերազանցության կապերը Հայաստանի հետ՝ նպաստելով երիտասարդ հետազոտողների շարժունությանը, ինչպես նաև գիտության և տեխնիկայի զարգացման ոլորտում նոր համագործակցային ծրագրերի իրականացմանը:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունները՝ սույն Հուշագրի շրջանակներում համագործակցությունը կիրականացվի հետևյալ ոլորտներում՝

1. Ֆիզիկա և աստղագիտություն
2. կյանքի մասին գիտություններ
3. երկրի մասին գիտություններ
4. հումանիտար և հասարակական գիտություններ
5. հնագիտություն և հնէաբանություն
6. քաղաքաշինություն

Հետագայում, Կողմերի համաձայնությամբ այլ ոլորտներ ևս կարող են ընդգրկվել գիտահետազոտական նախագծերի իրականացման համար հայտարարված մրցույթներում:

Հոդված 2

Համագործակցությունը կիրականացվի գիտահետազոտական նախագծերի իրականացման համար անցկացվելիք մրցույթների շրջանակներում, որոնց դրույթները կսահմանվեն Կողմերի կողմից՝ սույն Հուշագրի իրականացումն ապահովող Համատեղ հանձնաժողովի կողմից:

Համատեղ հանձնաժողովը բաղկացած կլինի ՖՀԳ, ԿԳՆ և ԿԳՆ գիտության պետական կոմիտեի (այսուհետ՝ ԳՊԿ) ներկայացուցիչներից:

Մրցույթին կարող են մասնակցել ՖՀԳ անդամ հայաստանյան համալսարաններում, ինչպես նաև այլ բուհերում և գիտահետազոտական հաստատություններում գրանցված ֆրանկոֆոն կամ մասամբ ֆրանկոֆոն հայ երիտասարդ հետազոտողները: Գիտահետազոտական ծրագրերի նախագծերը պետք է ներկայացվեն ԳՊԿ և ՖՀԳ: Նախագծերը կիրականացվեն առաջնահերթորեն հետևյալ երկրներում տեղակայված ՖՀԳ անդամ որևէ համալսարանի լաբորատորիայում՝ Ալբանիա, Բոսնիա և Հերցեգովինա, Բուլղարիա, Բելառուս, Չեխիա, Էստոնիա, Վրաստան, Հունաստան, Խորվաթիա, Հունգարիա, Ղրղզստան, Ղազախստան, Լիտվա, Լատվիա, Մոլդովա, Մոնտենեգրո, նախկին Հարավսլավիայի Մակեդոնական Հանրապետություն, Լեհաստան, Ռումինիա, Սերբիա, Ռուսաստան, Սլովենիա, Սլովակիա, Տաջիկստան, Թուրքիա, Թուրքմենստան, Ուկրաինա, Ուզբեկստան:

Հոդված 3

Սույն Հուշագրի իրականացման հայաստանյան պատասխանատու մարմինը ԳՊԿ-ն է :

Սույն Հուշագրի իրականացման նպատակով՝ ԳՊԿ և ՖՀԳ միջև կկնքվի մրցույթների ընդհանուր դրույթները և պայմանները կարգավորող առանձին պայմանագիր:

Հոդված 4

Սույն Հուշագրի շրջանակներում ծրագրերի իրականացման համար հայտարարված մրցույթի մասին հայտարարությունը հրապարակվում է յուրաքանչյուր տարի: Թեկնածուները գնահատվում են ԿԳՆ, ԳՊԿ և ՖՀԳ կողմից նշանակված փորձագետների հանձնաժողովի կողմից: Խորհրդակցություններից հետո Համատեղ հանձնաժողովը կկայացնի ընդհանուր որոշում ընտրված թեկնածուներին հատկացվելիք ֆինանսական աջակցության վերաբերյալ:

Հոդված 5

Նախագծերի իրականացման տևողությունը մեկից (1) մինչև առավելագույնը վեց (6) ամիս է:

Յուրաքանչյուր մրցույթի համար նախատեսվող բյուջեն կսահմանվի՝ ելնելով տվյալ տարվա համար նախատեսված բյուջետային հնարավորություններից:

ԳՊԿ և ՖՀԳ կողմից հատկացված միջոցները տրամադրվում են բացառապես հետազոտողների ճանապարհածախսի, ապահովագրության և կեցության ծախսերը առաջնահերթորեն Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի տարածքում հոգալու համար: Ֆինանսական աջակցությունը կիրականացվի համաձայն ԳՊԿ և ՖՀԳ համար ընդունված կանոնների:

Համատեղ ծրագրերի իրականացման հետ կապված անհրաժեշտ ցանկացած այլ ծախս կկատարվի գործընկեր լաբորատորիաների սեփական միջոցների կամ այլ աղբյուրների հաշվին:

Հոդված 6

Սույն Հուշագրի շրջանակներում մտավոր սեփականության իրավունքներին առնչվող հարցերը ենթակա են լուծման՝ Կողմերի պետություններում գործող օրենսդրություններին և կանոնակարգերին համապատասխան:

Հոդված 7

Սույն Հուշագրի շրջանակներում իրականացվող ծրագրերը դառնում են ԿԳՆ, ԳՊԿ և ՖՀԳ կողմից փոխհամաձայնեցված հաղորդակցության առարկա: Կողմերն իրավասու են

ներքին կարգով հաղորդակցվել սույն Հուշագրի առարկա հանդիսացող ծրագրերի իրականացման հարցերի շուրջ: Հաղորդակցության բոլոր միջոցները, ինչպես նաև տարածված պաշտոնական փաստաթղթերը կրելու են ԿԳՆ, ԳՊԿ և ՖՀԳ տարբերանշանները՝ հղում կատարելով Կողմերի միջև իրականացվող համագործակցությանը:

Հոդված 8

Սույն Հուշագիրը կնքվում է հինգ (5) տարի ժամկետով և ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից: Գործողության ժամկետն ինքնաբերաբար երկարաձգվում է հաջորդ հինգ (5) տարիների համար, եթե Կողմերից որևէ մեկը սույն Հուշագրի գործողության ժամկետի ավարտից 6 ամիս առաջ մյուս Կողմին գրավոր չծանուցի այն դադարեցնելու իր մտադրության մասին:

Հոդված 9

Սույն Հուշագրում Կողմերի ընդհանուր համաձայնությամբ կարող են կատարվել փոփոխություններ և լրամշակումներ, որոնք կձևակերպվեն առանձին արձանագրություններով և կկազմեն սույն Հուշագրի անբաժան մասը:

Հոդված 10

Սույն Հուշագրի մեկնաբանման կամ իրագործման ընթացքում ծագած վեճերը Կողմերը կկարգավորեն բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:

Բանակցութունների միջոցով վեճը չլուծելու դեպքում այն ենթակա է կարգավորման երեք անձից բաղկացած հանձնաժողովի կողմից. անդամներից մեկը նշանակվում է ԿԳՆ-ի կողմից, մյուսը ՖՀԳ-ի ռեկտորի կողմից, իսկ երրորդը, որ կնախագահի հանձնաժողովը, նշանակվում է երկու կողմերի ընդհանուր համաձայնությամբ: Այդ վերջինը պետք է լինի երրորդ երկրի ներկայացուցիչ և չի կարող լինել կամ եղած լինել ոչ ԿԳՆ -ի, ոչ ՖՀԳ-ի և ոչ էլ սույն Համաձայնագրի շրջանակում ֆինանսավորված ծրագրերի մասնակից հաստատությունների աշխատակից:

Հոդված 11

Սույն Հուշագիրը չի առաջացնում միջազգային հանրային իրավունքով նախատեսված իրավունքներ և պարտավորություններ:

Կատարված է 2 բնօրինակից՝ յուրաքանչյուրը հայերեն, ֆրանսերեն և անգլերեն: Հուշագրի դրույթների մեկնաբանման ընթացքում ծագած տարաձայնությունների դեպքում նախապատվությունը տրվում է ֆրանսերեն տեքստին:

Ք. Փարիզ, << 20 >> հուլիսի, 2016 թվական:

ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից՝ Նախարար **ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ**	Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալության կողմից՝ Ռեկտոր **Ժան-Փոլ դե ԳՈԴԵՄԱՐ**